ասելու. ինձ մեծ զարմանք էր պատճառում այդ բոբիկ ջենտլմէնիս ընկերութիւնը:

—Տեսե՞լ էք մեծ զանգը,— դարձաւ նա ինձ վերջապէս՝ լայն ժպիտը երեսին, տեսնելով, որ ես ոչ մի դժգոհութիւն չեմ ցոյց տալիս դէպի ինքը:

—Ոչ,— պատասխանեցի:

—Գնանք, ես ձեզ ցոյց կը տամ:

Մենք շեղուեցինք ճամփից եւ դիմեցինք նորից լերան կողմը:

Մի երկար ծառուղի տանում էր դէպի Զիօ-ինի ընդարձակ վանքը: Վանքի մօտ, առանձին մի հարթ բարձրութեան վրա, կախուած էր մեծ զանգը մի գոգաւոր ծածկի տակ:

Մեր զանգից նրա ունեցած գլխաւոր տարբերութիւնն այն էր, որ ձայն հանողը նրա միջից կախուած լեզուակը չէր, այլ մի երկար ձող, որ դրսից կախ էր ընկած զանգի մօտ՝ պառկած դիրքով:

Այդ զանգը ամենամեծն է Ճապոնում եւ մեծ յարգանք է վայելում: Բարձրութիւնը 10 ոտնաչափ է, տրամագիծը — 9-ը: Ասում են, որ հրաշալի հնչիւն ունի: Տաճարներից քչերը միայն զանգ ունեն. զանգը նուիրական է համարւում եւ ուխտագնացութեան առարկայ է:

Քայլերս ուղղեցի դէպի տաճարը:

Chuda, իմ հոգածու ջինրիկիշաս որտեղից որ է կօշիկներիս համար մի զոյգ կտաւէ շապիկ ճարեց, որով ես կարողացայ մտնել տաճարը առանց կօշիկներս հանելու:

Տաճարի ներսը փայտէ վանդակով բաժանուած է երկու հաւասար կէսերի: Խորքում երեւում էր մի քանի սեղան, ուր կանգնած էին երկար արձաններ տեսքով շատ նման